

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիսային համալսարանի 2017-2018 ուստարվա գործունեության

Հյուսիսային համալսարանի ռեկտորի պաշտոնակատար

Նաիրուհի Սարգսյան

Ինչպես իր գործունեության նախորդ տարիներին, այս ուսումնական տարում ևս համալսարանն իր առաքելությունն իրականացնելիս առաջնորդվել է համալսարանի կանոնադրությամբ, համալսարանի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրով: 2017-18 ուստարում համալսարանն անշեղորեն հետևել է իր ստանձնած գերակա ուղղություններին.

1. Լիիրավ հավատարմագրում՝ 2018 թ-ի մարտին բուհը 3-րդ անգամ արժանացավ, այս անգամ, լիիրավ հավատարմագրման 4 տ ժամկետով
2. Միջազգային գիտաժողովներ՝ 2017թ-ի նոյեմբերի 14-15-ը իրականացվել է <<ԲՈՒՀ-ԲԱՆԱԿ>> ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, <<ԱԶԳ - ԲԱՆԱԿ>> ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ գիտաժողովը նվիրված Հայոց բանակի 26 ամյակին և 2018թ-ի մայիսի 22-23-ը << ՀԱՅՈՑ ԴԱՐԱՎՈՐ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ խորագրով միջազգային գիտաժողով նվիրված Հայաստանի անկախության 100 ամյակին
3. Թումանյանագիտություն՝ ավանդույթի համաձայն փետրվարի 19-ին ծաղկեպսակ է տեղադրվել Թումանյանի հուշարձանին և կազմակերպվել է ուսանողների այցելությունը Հ. Թումանյանի տուն թանգարան/Գ. Հակոբյան
4. Ուսումնասրության արտոնություններ՝ դեռևս 2015 թ-ից սահմանվել են ուսման վարձերի զեղչեր, որոնք գործում են մինչ օրս
 - Ուսման առաջավորների և սոցիալական որոշ խավերի՝ զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամների և երկկողմանի ծնողազուրկների համար 50% ուսումնասրության ողջ ընթացքում
 - Միևնույն ընտանիքից 2 և ավելի ուսանողների, բանակից զորացրվածների, միակողմանի ծնողազուրկների համար 1-ին կուրսում՝ 20-30% զեղչ, որը հաջորդ կուրսերում կպահպանվի գերազանց առաջադիմության դեպքում
 - Անվճար ուսուցում Արցախում 2016 թ. -ին ռազմական գործողությունների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած զինվորականների և մահացած զինծառայողների ընտանիքի անդամների /զավակ, քույր, եղբայր/ համար

- Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների քաղաքացիների կրթությունը մրցութային կարգով՝ 50%-ի չափով, իսկ սիրիահայերինը՝ անվճար

2017-18 Ուսումնական տարվա ընթացքում մեր բուհում անվճար կրթություն է ստացել 13, անվանական թոշակ է ստացել 2, ուսումնական վարձի գեղչից օգտվել է 150 ուսանող:

Այս ուսումնական տարում մեծ ուշադրություն է դարձվել ուսումնական գործընթացի կատարելագործմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, կրթության որակի ապահովման համակարգի կատարելագործմանը: Այս գործունեության շրջանակներում իրականացվել են դասալսումներ բոլոր ֆակուլտետներում գրեթե բոլոր դասախոսների մոտ Որակի վարչության և պրոռեկտորի կողմից՝ թիրախային խմբեր ընտրելով փորձառու և սկսնակ դասախոսներից: Որակի վարչությունը կազմակերպվել է ուսանողների կողմից դասախոսների գնահատման ավանդական գործընթացը, որանց արդյունքները վերլուծվել և ներկայացվել է ամբիոնների քննարկմանը: 2017-18 ուսումնական տարին նշանավորվեց նրանով, որ մեր բուհը հայտնվեց այն եզակի բուհերի շարքում, որ արժանացավ հեռավար ուսուցման դրամաշնարհին՝ շուրջ 70 մլն դրամ արժողությամբ: Ուսումնական տարվա ընթացքում Երևան և Ալավերդի քաղաքներում կահավորվեցին ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնիկայով հագեցած կաբինետներ:

1. 2017-18 ուսումնական տարվա ընթացքում մեր բուհում կրթություն է ստացել 1411 ուսանող: Առկա և հեռակա ուսուցման ձևերով կրթություն է կազմակերպվել՝

1.1 բակալավրի կրթական ծրագրով՝

h/h	մասնագիտությունը	ուսանողների քանակը
1	իրավագիտություն	448
2	ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	288
3	կառավարում	183
4	ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	36
5	ծրագրային ճարտարագիտություն	22
6	մանկավարժություն և մեթոդիկա	233
7	նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	17
8	տարրական մանկավարժություն և մեթոդիկա	57
9	օտար լեզու և գրականություն	34
10	մասնագիտ. մանկավարժութ. օտար լեզու և գրականություն	12
11	լրագրություն	—
12	հոգեբանություն	40

Ընդամենը՝ 1370

1.2 մագիստրատուրայի կրթական ծրագրով`

h/h	մասնագիտությունը	ուսանողների քանակը
1	իրավագիտություն	62
2	ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	–
3	կառավարում	19
4	ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	2
5	մանկավարժություն և մեթոդիկա	19
6	օտար լեզու և գրականություն	4
7	լրագրություն	–

Ընդամենը` 106

1.3 միջին մասնագիտական կրթական ծրագրով`

h/h	մասնագիտությունը	ուսանողների քանակը
1	,Քույրական գործե Երևանում	37
2	,Ատամնատեխնիկական գործե Երևանում	11
3	Ալավերդի քաղաքի ,Թումանյանե բաժանմունքում	19

Ընդամենը` 67

2. Համալսարանի բոլոր սովորողների միջին թիվը 2017-18 ուստարում

h/h	կրթական աստիճան	ուսուցման ձևը	միջին թիվը	Ընդամենը
1	բակալավրիատ	առկա		1370
		հեռակա		
2	մագիստրատուրա	առկա		106
		հեռակա		
3	ասպիրանտուրա	առկա		6
		հեռակա		
4	քոլեջ	առկա		67
5	ավագ դպրոց	առկա		26
6	Ընդամենը			1575

164 ուսանող դուրս է մնացել բուհից:

Այս ուսումնական տարում բուհն ավարտում է 335 ուսանող` բակալավրի որակավորմամբ և 50 մագիստրոս, ինչպես նաև 20 ուսանող միջին մասնագիտական կրթական ծրագրով , որոնցից գերազանցությամբ բակալավրիատն ավարտել են.

- Մանկավարժություն և մեթոդիկա` 2 ուս- առկա ուսուցմամբ
- Օտար լն գրակ. ` 2 ուս- առկա ուսուցմամբ
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա` 1ուս-հեռակա ուսուցմամբ
- Ձեռնարկությունների տնտես. և կառավարում` 4ուս –առկա, 1 ուս-հեռակա
- Իրավագիտություն` 4 ուս –առկա, 4 ուս-հեռակա

Մագիստրատուրան գերազանցությամբ ավարտել են.

- Օտար լ և գրակ.՝ 1 ուս
- կառավարում՝ 2 ուս
- Իրավագիտություն՝ 1 ուս

Միջին մասնագիտական կրթական ծրագիրը գերազանցությամբ ավարտել է 1 ուսանող՝ քույրական գործ մասնագիտությամբ:

Աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով համալսարանը կորցրել է իր դիմորդների զգալի մասը, սակայն համալսարանն այսօրվա դիմորդի համար ավելի գրավիչ դարձնելու նպատակով ձեռնարկվել են մի շարք քայլեր.

- կազմակերպվել է գովազդային արշավներ լրատվամիջոցներով
- այցելություններ դպրոցներ ու միջին մասնագիտական հաստատություններ
- պարբերաբար հանդիպումներ է կազմակերպվել մայրաքաղաքի և հարակից շրջանների ավագ դպրոցների աշակերտների հետ
- ուսանողներին տրվում է արտոնություններ, զեղչեր և անվանական կրթաթոշակներ

Ակտիվ է եղել նաև բուհի գիտաստեղծագործական և մշակութային կյանքը՝ բուհը իր ուշադրության կենտրոնում է պահել ոչ միայն ուսանողների կրթադաստիարակչական հարցերը, այլև լրջորեն զբաղվել է նրաց մշակութային հանգստի կազմակերպմամբ /այցելություն թատրոն/՝ զգալի միջոցներ տրամադրելով դրա համար:

Դասախոսներից և ուսանողներից ոմանք մասնակցել են միջազգային գիտաժողովների և մրցույթների, հրատարակել են գիտական հոդվածներ, մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, կազմակերպել անհատական ցուցահանդեսներ: Այժմ այս մասին ավելի կոնկրետ.

Հայոց լեզվի և գրականության ամբիոն, ամբիոնի վարիչ տկն. ՄԿՐՏՉՅԱՆ

Ամբիոնում այս տարի իրականացվել են հետևյալ աշխատանքները

1 ուսումնամեթոդական հոդվածի հրատարակում

1 դասագրքի խմբագրում

2 գիտական հոդված հայրենական գիտական ամսագրերում

1 գիտական ժողովածուի խմբագրում

1 ավարտական և 2 մագիստրոսական թեզի գրախոսում Աբովյանի անվան մանկ համ.

Ամբիոնն ակտիվորեն մասնակցել է բուհում կազմակերպված 4 գիտական խորհրդի, 3

ֆակուլտետային խորհուրդի նիստի, 2 պրոֆեսորադասախոսական կազմի

ժողովի, ունեցել են ամբիոնի 10 նիստ

1 մասնակցություն ԿԳԱԻ կողմից կազմակերպված վերապատրաստմանը <<Հայ

գրականության ուսուցումը ավագ դպրոցում թեմայով>>

Վ. Դավթյանը Մասնակցել է գրողների հոբելյանական երեկոներին՝ որպես քանախոս, եղել է միջոցառողական օլիմպիադաների հանձնաժողովի անդամ: Ն. Մկրտչյանը կատարում է, շնվհ. Թումանյանի կյանքի և գործունեության տարեգրություն, հատորյակի նյութերի հավաքագրում, ՀՀ ԳԱԱ, գրականության ինստիտուտ: Աշխատում է, Խոսքի զարգացում, առարկայի թեմաների շուրջ, հավաքագրում և խմբագրում է տպագրության համար: Գ. Հակոբյանը խմբագրել է Ս. Հովհաննիսյանի <Թումանյանը հայ մանկագրության խաչմերուկներում> մենագրությունը, Մ. Մանուկյանի <Որ ինձ էլ հիշեք> հուշապատումը: Խմբագրում է բուհի պաշտոնաթերթը, պատրաստում եմ համալսարանին առնչվող տարաբնույթ նյութեր պարբերական մամուլի համար, զբաղվում եմ խմբագրական աշխատանքով: Մ.Մաճկալյանը 25.03.2018թ. վարպետաց դասեր է անցկացրել <<Լոգոս>> հոգեբանական կենտրոնում՝ <<Խոսքի մշակույթ և հաղորդակցման արվեստ>> խորագրով: Մկրտչյան Ալլան կատարում եմ Համաստեղի արձակի գիտահետազոտական ուսումնասիրություն:

Ռումանագերմանական և ռուս քանասիրություն ամբիոն, ամբիոնի վարիչ Բ.ՌՇՏՈՒՆԻ

1 ուսումնամեթոդական հոդված

1 դասագրքի խմբագրում

7 գիտական հոդված հայրենական գիտական ամսագրերում

1 գիտական ժողովածուի խմբագրում

ամբիոնի 5 դասախոսներ մասնակցել են «Մանմար» ընկերություն կողմից կազմակերպված սեմինարի՝ դասավանդման մեթոդների կատարելագործման նպատակով

ամբիոնի կողմից ղեկավարվել և գրախոսվել է 1 մագիստրոսական թեզ և գրախոսվել է 1 ատենախոսություն

Ամբիոնն ակտիվորեն մասնակցել է բուհում կազմակերպված 4 գիտական խորհրդի, 3 ֆակուլտետային խորհուրդի նիստի, պրոֆեսորադասախոսական կազմի 2 ժողովի, ունեցել են ամբիոնի 8 նիստ

2 դասախոս մասնակցել է Բրյուսովի համալսարանում կազմակերպված որակավորման բարձրացման սեմինարի

1 դասախոս մասնակցել է Որակի Ապահովման Ազգային Կենտրոնի կազմակերպած «Երիտասարդ դասախոսների, կարիերայի պատասխանատուների և ուսանողների աշխատաժողովին»:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոն, ամբիոնի վարիչ տկն. Սարգսյան

Հրատարակվել է 6 ուսումնամեթոդական հոդված

9 գիտական հոդվածներ, որից 3-ը արտասահմանյան գիտական ամսագրերում

Ամբիոնի 3 դասախոս մասնակցել է գիտաժողովների, որից 2-ը Հ համալսարանում

Ամբիոնում ղեկավարվել և գրախոսվել է 9 մագիստրոսական թեզ

Ամբիոնն ակտիվորեն մասնակցել է բուհում կազմակերպված 4 գիտական խորհրդի, 3

Ֆակուլտետային խորհուրդի նիստի, պրոֆեսորադասախոսական կազմի 3 ժողովի, ունեցել են ամբիոնի 10 նիստ
3 դասախոս մասնակցում է MOODLE ԾԻԳ դրամաշնորհային ծրագրին
Այս ուսումնական տարում ամբիոնի դոցենտ պրն Ա. Հարությունյանը կազմակերպել է իր աշխատանքների 4 անհատական ցուցադրում՝ Ալավերդի Վանաձոր, Ստեփանավան և Շուշի քաղաքներում, ինչպես նաև աշխատում է Դոկտորական թեզի վրա :

Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, ամբիոնի վարիչ պրն. Ճուղուրյան

Հրատարակվել է 2 ուսումնական ձեռնարկ
6 ուսումնամեթոդական հոդված, 1 մենագրություն
Կատարվել է 3 դասագրքի խմբագրում
12 գիտական հոդված հայրենական գիտական ամսագրերում
2 գիտական հոդված արտասահմանյան գիտական ամսագրերում
2 մասնակցություն գիտական ժողովածուի խմբագրման աշխատանքներին
Ամբիոնի 3 դասախոս մասնակցել է գիտաժողովի, որից 2-ը Հ համալսարանում Ղեկավարվել և գրախոսվել է 11 մագիստրոսական թեզ
Ամբիոնն ակտիվորեն մասնակցել է բուհում կազմակերպված 4 գիտական խորհրդի, 5 ֆակուլտետային խորհուրդի նիստերի, պրոֆեսորադասախոսական կազմի 5 ժողովի, ունեցել են ամբիոնի 9 նիստ
3 դասախոս մասնակցել է օտար լեզվի, 2 դասախոս՝ համակարգչային տեխնոլոգիաների վերապատրաստման դասընթացների
6 դասախոս մասնակցում է MOODLE ԾԻԳ դրամաշնորհային ծրագրին
1 դասախոս՝ Խալաթյան Հարություն դասախոսների փոխանակման ծրագրով մեկնել է Լեհաստանի Ադամ Միցկեվիչի անվան համալսարան:

Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն, ամբիոնի վարիչ պրն. Մկրտչյան

1 ուսումնամեթոդական հոդված ներկայացված է տպագրության
3 գիտական հոդվածներ հայրենական գիտական ամսագրերում
ամբիոնի կողմից ղեկավարվել և գրախոսվել է 2 մագիստրոսական թեզ
Ամբիոնն ակտիվորեն մասնակցել է բուհում կազմակերպված 4 գիտական խորհրդի, 6 ֆակուլտետային խորհուրդի նիստերի, պրոֆեսորադասախոսական կազմի 5 ժողովի, ունեցել են ամբիոնի 9 նիստ:

Իրավագիտության և հասարակագիտական առարկաների ամբիոն, ամբիոնի վարիչ պրն. Ասատրյան

Հրատարակվել է 2 ուսումնական ձեռնարկ

23 գիտական հոդվածներ հայրենական և 2 արտասահմանյան գիտական ամսագրերում

Ամբիոնի 11 դասախոս մասնակցել է գիտաժողովի

ամբիոնի կողմից ղեկավարվել է 27 և գրախոսվել 28 մագիստրոսական թեզ

Ամբիոնի 1 դասախոս մասնակցել է կրթական բարեփոխումներին նվիրված, 7-ը՝ օտար լեզվի, 2-ը համակարգչային տեխնոլոգիաների վերապատրաստման դասընթացների:

ԵՎ ամփոփելով ամբիոնների աշխատանքներն ուզում եմ հավելել, որ այս ուսումնական տարվա ընթացքում բոլոր ամբիոններն էլ իրականացրել են փոխադարձ դասալսումներ, կազմակերպել թեմատիկ էքսկուրսիաներ՝ Երևանի տարբեր թանգարաններում, մշակութային այլ հիմնարկներում, իրականացրել են ցուցադրական և բաց դասեր, կիրառելով դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաներ և մեթոդներ:

ԴԵԿԱՆԱՏՆԵՐԻ աշխատանքը գնահատելիս ուզում եմ միայն վկայակոչել այս տարվա նրանց ստացած պատվոգրերը, որոնք նրանց լավագույն աշխատանքի գրավականն են:

ԱՅՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ բավականին հազեցած էր նաև ուսումնական վարչության և պրակտիկայի բաժնի աշխատանքը, ամենօրյա ընթացիկ աշխատանքներին ավելացավ գործող բոլոր ուսումնական պլաններում կատարված արմատական փոփոխությունները՝ պայմանավորված ամփոփիչ ավարտական քննություններն ավարտական աշխատանքներով փոխարինելու գործընթացով: Փոխվել է նաև բոլոր դիպլոմների միջուկների 8-րդ կետը, 15 մասնագիտությունների համար փոխվել է դիպլոմների հավելվածները և դիպլոմների տպագրության համար ստեղծվող տվյալների բազայում /լավաշում/ ինֆորմացիան համապատասխանեցվել է նոր ուսպլաններին: Պրակտիկայի բաժնի ղեկավար Ա. Հարությունյանը վերանայել է պրակտիկայի վարման ընթացակարգը՝ հազեցնելով այն նոր պահանջներով և ստեղծել է պրակտիկայի հաշվետվության նոր ձևանմուշ:

ԳՐԱԴԱՐԱՆԻ աշխատակցուհի Ինգա Մարուխյանի և ամբիոնների վարիչների համատեղ ջանքերով զգալիորեն համալրվել է էլեկտրոնային գրադարանի ֆոնդը՝ 40 –ից դարձել է 455:

ԵՎ չմեղանչելով համեստության դեմ հավելեմ, որ այս աշխատանքների որոշ մասը նախաձեռնվել, իրականացվել և իրականացումը վերահսկվել է ուսումնահետազոտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

Իմի բերելով 2017-18 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, առաջարկում եմ բուհի ծավալած գործունեությունը գնահատել լավ: